ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 16 >> 08 2012թ. N: 98 ք.Գյումրի

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի թիվ 626-Ն որոշմամբ հաստատված «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգի» 5-րդ, 10-րդ և 11-րդ կետերի դրույթները՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքներն ընդունելու նպատակով ձևավորել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահ Ալբերտ Մարգարյանին՝ սահմանված կարգով և ժամկետում կազմել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը և ներկայացնել հաստատման:

Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ նույնն է